Hürriyet

ԱՐՑԱԽ-ՀԱՅԱՍՏԱՆԸ «ՀՅՈՒՐՐԻԵԹ»Ի ԼՈՒՍԱՐՁԱԿԻ ՏԱԿ

Ինչո՞ւ է թուրքական ազդեցիկ թերթը խուսափում տեսական մեկնաբանությունից

Լեռնային Ղարաբաղում, ինչպես նաեւ Հայաստանի սահմանամերձ շրջաններում տեղի ունեցող իրադարձություններին ժամանակ առ ժամանակ անդրադառնում են թուրքական մամուլը. այդ թվում նաեւ «Հյուրրիյեթ» թերթը: Անհրաժեշտ է նշել, որ «Հյուրրիյեթ»ը հրատարակվելով այնպիսի մի երկրում, որը ՆԱՏՕ-ում ԱՄՆ-ի ամենահավատարիմ վինակցի համարում ունի եւ ամեն կերպ ձգտում է եւրոպական ընտանիքի լիարժեք անդամ դառնալ, մի կողմ դնելով իրադարձությունների առնչությամբ ամերիկյան սենատի կամ Եւրախորհրդարանի որոշումները, դրանք լուսաբանելիս հենվում է խորհրդային պաշտպանության ու ներքին գործերի նախարարությունների եւ ՏԱՍՍ-ի հաղորդագրությունների վրա, միաժամանակ աշխատում է խուսափել ավելորդ մեկնաբանություններից: Նման մոտեցումը միանգամայն բացատրվում է իրադարձությունների շուրջ խորհրդային պաշտոնական հաղորդագրությունների բացահայտ ադրբեջանամետ միտումով, որն ըստ երեւույթին ամբողջությամբ բավարարում է թուրքական թերթին:

Իր հրապարակումների մեջ, ճիշտ է, թերթը տեղ է հատկացնում նաեւ խորհրդային բանակի ներքին գործերի նախարարության կորքերի ադրբեջանական ՕՄՈՆ-ի հետ համատեղ հակահայկական վայրագ գործողությունների առթիվ հանրապետության նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի մամուլի ասուլիսներին, սակայն այդ բոլորը ներկայացվում է այնպիսի մի ոճով, որը հայկական կողմի կարծիքի վերաբերյալ ընթերցողին պարզապես թերահավատություն է ներշնչում:

«Հյուրրիյեթ»ը մայիս ամսվա համարներում կողմնորոշվելով խորհրդային պաշտոնական հաղորդագրություններով, փորձում է ցույց տալ, թե նախահարձակը հայեր են եւ նրանք ոչ մի միջոցի առաջ կանգ չեն առնում: Օրինակ, մայիսի 6-ի համարում նշվում է, թե իբր *«մահմեդական բրդերին Հայաստանից վտարելով, հայերն իրենց ազգային նպատակների համար հնարամտորեն օգտագործում են նզդիներին»*: Մինչդեռ, հայտնի է, որ հայերը այս հարցում գործ ունեն մոսկովյան հզոր մեքենայի հետ: Իսկ մայիսի 8-ին թերթը, հրապարակելով *«Թուրքիայի համար մի նոր ըսպառնալիք»* հոդվածը *«Սահմանից 30 կմ հեռավորության վրա»* ենթավերնագրով, նախ ձեւացնում է, որ մանկական դյուրահավատությամբ է վերաբերում *«սնփական ատոմակայանը պայթեցնելու հայկական մտահաղացման»* վերաբերյալ Յուրի Շատալինի շարանենգ հերյուրանքին, ապա մեջբերելով նրա հետեւյալ խոսքերը, թե *«Ես թույլ չեմ տա հայերին խաղալ այդպիսի վտանգավոր խաղալիքով»*, փաստորեն ժխտում է այսպես կոչված «սպառնալիքի» առկայությունը: Պարզ երեւում է, որ «Հյուրրիյեթ»ը նույնպես չի հավատում խորհրդային պաշտոնական հաղորդագրությունների ճշմարտացիությանը: Բայց քանի որ դրանք ունեն հակահայկական ուղղվածություն, հետեւաբար թերթը կողմնորոշվում է սուտ ու կեղծիքով լի այդ հաղորդագրություններով:

Ինչպիսին էլ լինի «Հյուրրիյեթ»ի կողմնորոշումը, այնուամենայնիվ վերջին իրադարձությունների լուսաբանումը թերթի կողմից, ունի իր առանձնահատկությունները: Նախ, հայերի դեմ ուղղված արյունալի գործողությունները թերթի կողմից ներկայացվում են որպես ջնջված ընդհարումներ հայ գրոհայինների եւ խորհրդային բանակի ներքին գործերի նախարարության կորքերի միջեւ: Ընդ որում, խնամքով շրջանցվում է ադրբեջանական ՕՄՈՆ-ի մասնակցությունը այդ վայրագ գործողություններին: Դրա փոխարեն տեղի-անտեղի հիշատակվում է հանրապետության նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի Կարսի հայկական պատկանելության վերաբերյալ հայտարարությունը, որը ոչ մի առնչություն չունի վերջին իրադարձությունների հետ:

Երկրորդ առանձնահատկությունը թերեւս այն է, որ թերթը յուրահատուկ ուշադրությամբ է հետեւում հայերի տեղահանման փաստերին: Մայիսի 22-ի համարում, հենվելով ՏԱՍՍ-ի տվյալների վրա, թերթը խոսում է 1400 հայերի մասին, *«որոնք բնակվելով Ղարաբաղում իրենց ընակավայրերից հեռանալու կանկությամբ իր դիմել են իշխանություններին»*, իսկ մայիսի 23-ի համարում ՏԱՍՍ-ի տեղեկությունը ճշգրտվում է ներքին գործերի նախարարության պաշտոնական հաղորդագրություններով եւ նշվում հետեւյալը. *«Շուրջ 1400 հայ խորհրդային բանակի տրամադրած փոխադրամիջոցներով Լեռնային Ղարաբաղից տեղահանվել են Ռուսաստանյան Դեդերացիայի տարածք: 14 հազար հայեր ելս Լեռնային Ղարաբաղից հեռանալու խնդրանքով դիմել են ադրբեջանական իշխանություններին»*: Ի դեպ, հայերի տեղահանման դեպքերը ուղղակիորեն շաղկապվում են ադրբեջանցիների անվտանգության հետ: «Հյուրրիյեթ»ը մայիսի 17-ին համարում անդրադառնալով Գետաշենից ու Մարտունաշենից հայ բնակչության բռնի տեղահանման փաստին, այն ներկայացնում է Մութալիբովի հետեւյալ խոսքերով. *«Վերջին գյուղերի տեղահանումը անհրաժեշտ էր, պետք է դատարկել նաեւ այն բոլոր գյուղերը, որոնք բաց են ծառայում հայ գրոհայիններին»*:

Երրորդ առանձնահատկությունն այն է, որ «Հյուրրիյեթ»ը մեծ գոհունակությամբ է նշում ինչպես ԽՍՀՄ պաշտպանության ու ներքին գործերի նախարարությունների, այնպես էլ գրեշիդենտ Գորբաչովի ադրբեջանամետ դիրքորոշման մասին: Մայիսի 23-ի համարում թերթը *«Կարմիր բանակից մեծ հարված հայ գրոհայիններին»* վերնագիրը կրող հոդվածում նշում է, թե *«Գորբաչովի կողմից Ադրբեջանին տրվող բացահայտ աջակցությունից հետո Հայաստանի Հանրապետության նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը Միտերանի օգնությանը դիմելու միտումով մեկնում է Հրանսիա»*:

Ոչ որի համար գաղտնիք չէ, որ «Հյուրրիյեթ»ը համակրանք ունի Ադրբեջանի հանդեպ: Սակայն կարմանալի է, որ Թուրքիան ՆԱՏՕ-ի կազմում ընդգրկվելուց ի վեր Ամերիկյան վենքի գովազանությամբ կրաղվող «Հյուրրիյեթ»ը ինչպես Գորբաչովի, այնպես էլ ԽՍՀՄ պաշտպանության ու ներքին գործերի նախարարությունների հանդեպ հիացմունքով է արտահայտվում: Ըստ երեւույթին, հայերի դեմ սանձազերծված անմարդկային գործողությունները, որոնք ուղեկցվում են անմեղ քաղաքացիների սպանություններով, բռնի տեղահանումներով, պարառ հող են պատրաստում Գորբաչովի խորհրդատու օգնական Ֆիլկոյի բնութագրմամբ, թուրքերին ու սլավոնների պատկանող ԽՍՀՄ-ի եւ Թուրքիայի փոխհարաբերությունների հետագա բարգավաճման համար:

1 ՀԱՅԵՏԱԼ